


Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԻՍՈՒԱՄԵԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ

Ստեփանոս ա. թ. Սամուելեանի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱԿԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԿԱԶՄԵՑ Յ. Ա.

Հրատարակութիւն

ՅՈՒՂԻԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «Պրօցրես» Խ. Պողոսեանի, Լոբիս-Մելիքեան փ. 1.

1921

一
九

Գրիչ քար զի պրովինտ.

371.1 (Կ7.925) (092 Սամակալայն)

Հ-61

ՅԻՍՈՒԱՄԵԱԿ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԱՏՈՒԹՎԱԾ է 1961 թ.

Ստեփանես ա. ֆ. Սամուելեանի

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՔԵՐԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԿԱԶՄԵՑ Յ. Ա.

Հրատարակութիւն

ՅՈՒՅԵԼԻԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Պրոգրես» և. Պողոսեանի, Լոբիս-Մելիքեան փ. 1.
1921

A $\frac{\pi}{12120}$



ԱՅԵՓՈՆՆՈՍ ԱՒԱԴ ՔՈՀՈՆԱՅ ԱՎՈԹԵԼԵԱՆ

Զօն Նորին բարձր Արժանաւ-
պատութեան Ստեփանոս ա.

բ. Սամուէլեանին, իր
Յիսուսամեայ Յօրելիանի առթիւ

ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՀԱՅՐ !

Զեր կեանքի ձմեռնամտին՝ եօթանասուն և հինգ
ամեայ ծերութեան հասակում՝ Դուք, այսօր, արժանա-
նում էք այնպիսի պատւի ու յարգանքի, որին շատ
քչերն անգամ կարող են երազել:

Դուք, երեք քառորդ դար, տեսել էք կեանքի ոլայ-
ծառ գարուններից եօթանասուն և հինգը, տեսել էք ու
անցել նրա հոտաւէտ բուրմունքից միշտ անկուշտ ու
միշտ անյագ:

Սակայն այսօր, Զեր եօթանասուն և վեցերորդ
գարնան այն օրն էք ապրում, երբ դուք այս գարուն-
քով արբենալու էք այնպիսի բաւականութեամբ, որպի-
սին չէք տեսել երբէք:

Զեր կեանքի այսօրւան գարունքը՝ Զեր յիսնամեայ
բեղմնաւոր, գործունէութեան պտուղն է։ Մի պտուղ՝
յիսուն գարունքների ցողով ցողւած, մի պտուղ, յիսուն
գարունքների շողերով շողւած։

Այսօր յիսուն հատ ցող բիւրեղացել են ու Զեր
ճակատին թառ եղել, դրանցից ամեն մէկը մի նշան է
Զեր յիսուն երկար ու երկար տարիների քրանթոր
գործունէութեան։

Յիսուն երկար տարիներ Զեր խօսքն է հնչել մա-
տաղ սերունդների ականջին, յիսուն տարիներ Զեր մէջքն
է կռացել մեր դպրոցական կեանքի ծանր բեռան տակ՝
որպէս ուսուցիչ։

Եւ յիսուն տարիներ շարունակ, Դուք Զեր հաւատքի խօսքն էք քարոզել Զեր ժողովրդին ու նրա հոգեկան ապրումները միսիթարել, որպէս հոգեոր հայր:

Բաւ է, բաւական, Ուսուցիչ հայր! Հանգստի ժամն է հնչել այժմ Զեզ համար, որով Զեր ծերութիւնը պէտքէ կարողանայ բարոյապէս միսիթարւել իր գործունէութեան բարի պտուղների վայելումով:

Միսիթարւեցէք, Ուսուցիչ հայր! տեսէք, Զեր սիրեցեալ ծռւխը, աշակերտութիւնն ու ծանօթները՝ յատուկ բարիացակամութեամբ՝ այսօր համախմբւել են Զեր շուրջը և իրենց անկեղծ զգացմունքներն են ներսշնչում Զեզ:

Զեր յիսնամեակը կազմակերպող Յանձնաժողովը սեղմելով Զեր աջը, Զեր առաջը կանգնած, անկեղծ սրտով գոչում է...

Կեցցէ Ուսուցիչ-հայրը, Կեցցէ Տէր-Ստեփաննոսը, Կեցցէ նրա ծերութիւնը: Թող, Էլի երկար տարիներ ապրէք Դուք, որ կարողանաք այսօրւան բաւականութեամբ միսիթարւել ու թարմանալ:

Նախապահ Յորելիանական Յանձ. Գ. Բաշինջաղեան

Անդամներ

Յորել. Յանձնաժ.

Եր. Ասովմեան
Ատ. Գալստեան
Ար. Աբովեան
Ա. ա. ը. Շիոյեան
Յար. Զարզարեան
Սամ. Տէր-Սարգսեան
Կար. Արուքջանեան
Բար. Նասիբեան

Քարտուղար՝ Աղաքարեան Յ.

ԱՐԱՁԱԲԱՆ

Պարտքի և պարտաճանաչութեան զգացմունքներն իր հոգում ունեցող աշխատաւորը՝ ապրում է ոչ միայն իր անհատական կեանքի համար, այլև՝ այդ զգացմունքներով ոգեսորւած՝ նա ապրում է հասարակական հանրօգուտ կեանքի համար:

Հասարակական հանրօգուտ կեանքի գիտակցութիւնն այդ օրինակ աշխատաւորների սրտի մէջ վառ է պահում այն սէրը, որով նա ոգեսորւած՝ ձգտում է միշտ դէպի հասարակական գործի օգտակարութիւնը:

Այսպիսով՝ հասարակական գործը՝ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ՝ սիրոյ և կամեցողութեան գործ։ Այսպիսի զգացմունքներով քչին են լինում առհասարակ ներսշնչւած. քչերն են, որ իրենց անհատական կեանքի ապրումներին զուգընթաց՝ ապրում են նաև հասարակութեան համար:

Այդ քչերի ցանկը սահմանափակում է մեզանում այն անուններով, որոնք յաճախ իրենց անձը մոռացութեան տալով՝ իրենց անհատական ապրումների լաւագոյն վիճակը մի կողմը թողնելով՝ հետզհետէ աւելի ու աւելի խորանում են հանրօգուտ, հասարակական գործի մէջ։

Ուսուցիչը գրողն ու գրականագէտը, դերասանը, երաժիշտը, նկարիչն ու գեղարւեստագէտը, հաղւագիւտ դէպքում նաև արթուն հոգեսորականը, — ահա այն անձինք, որոնք մեզանում դարբնում են հասարակական կեանքի գործը յօգուտ ժողովրդի բարօրութեան և յանուն նրա կուլտուրայի զարգացման։

Սա փաստ է։

Մեզանում փաստ է և այն իրողութիւնը, որ անցեալում յիշեալ աշխատաւորները՝ յաճախ մինչև իմահատքնում էին իրենց գործի ծանրութեան տակ և ժամա-

նակին չէին արժանանում այնպիսի խրասունքի և գնահատման, որոնցով ողերւում էին թէ իրենք՝ այդգործիչները՝ և թէ նրանց հետևողները:

Սակայն ժամանակները փոխւել են... Մեր այսօրւան կեանքն իր խելադար անցուդարձով՝ որքան նսիմացնում է մարդկանց հանգիստ կեանքի ապրումները, այնքան գիտակցութեան է բերում նրանց իրենց դործիչների գնահատման խնդրում։

Ահա այդ գահանատման մի մխիթարական երեսյթնէ այն գիտակցութիւնը, որով Թիֆլիսի Կաթուղիկէ ո. Ա.ծածին (Մէրդանի ո. Գէորգ) հինաւուրց եզեղեցու ծխական համայնքից մի խումբ՝ կամենալով պսակել իրենց ուսուցիչ-քահանայ Սամւէլեանի ծերութիւնը. Նրա յիսնամեայ գործունէութեան Յօքելեանն է կազմակերպում այն լաւատես համոզունքով, որ նրա ծխականներն, աշակերտներն ու աշակերտունիները, նրա բարեկամները, ընկերներն ու պաշտօնակիցները առաջ կըգան ու իրենց ջերմագին վերաբերմունքը ցոյց կըտան նրան։

Թող, սոյն գնահատման գիտակցութիւնը վարակիչ օրինակ դառնայ հասարական բոլոր այն խաւերի համար՝ որոնք աւեսնելով իրենց շրջանի անձնւէր գործչի վաստակը՝ ձեռք կը մեկնեն նրա պատւի, կոչման ու կեանքի ապահովման գործում։ Զուր չէ ասւել այն խորիմաստ խօսքը, թէ «Մշակն արժանի է իր վարձատրութեանը»։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1920 թւի նոյեմբերի 28-ին, Կաթուղիկէ ս. Աստածածնին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցում ցերեկւայ ժամը 12-ին տեղի ունեցաւ նոյն եկեղեցու միաբան աւագ երէց Ստեփաննոս աւագ քահանայ Սամւելեանի ծխականների ընդհանուր ժողովը։ Այդ ժողովը հրաւիրւած էր Սամւելեան աւ. քահանայի մի խումբ ծխականների՝ պ.պ. Բար. Նասիրեանի, Ստ. Գալստեանի, Եր. Ատովմեանի և Աբ. Աբովյանի կողմից։


Ժողովին նախագահեց պ. Երւանդ Ատովմեանը, որը մի քանի խօսքով բացատրեց ժողովականներին ժողովի նպատակը, այն է, որ իրենց եկեղեցու աւագ քահանայ Սամւելեանը՝ որպէս քահանայ, անցել է յիսուն երկար ու ձիգ տարիներ, ծերացել է ի ծոց եկեղեցւոյ, սիրել է իր ծուխը հայրական սիրով, փոխադարձաբար յարգւել է իր ծխականներից։ Նա, բացի իր քահանայական պաշտօնից, յիսուն երկար տարիներ մեր դպրոցներում, մեր հարազատ զաւակների համար եղել է ուսուցիչ և իր հայրական զգացմունքներով դաստիարակել է իր սաներին։ Ու իր ոյժերը ներածին չափ եղել է հասարական մի համեստ աշխատաւոր։ Ահա այս վիճակի մէջ՝ մեր ծխական քահանան՝ այսօր կանգնած է մեր մէջ ժամանակների ներկայ ծանր կացութեան մէջ թոյլ ոյժերով և անցուցած տարիներով։ Նրա ծխականներից մի խմբի մէջ միտք է յղացւել՝ կազմակերպել մի տօնախմբութիւն նրա յիսնամեայ գործունէութեան առիթով։ Այդ տօնախմբութեան խնդիրը քննութեան առնելու համար հրաւիրել է նրա ծխականների ներկայ ընդհանուր ժողովը։

Մտքերի փոխանակութիւնը գտնումէ՝ այս ընդհանուր ժողովի հրաւէր կարդացողների առաջարկը՝ աէր հօր յիսնամեակի վերաբերութեամբ՝ շուտ տեղին և շատ համակընելի, միաձայն ընդունումէ Սամւէլեանի յիսնամեակը տօնելու կարևորութիւնը, կազմում է մի յանձնաժողով այդ գործը իրականացնելու։ Ընտրում են պ. պ. Նասիբեան Բարսեղ, Ատովմեան Երւանդ, Զարգարեան Յարութիւն, Աբովլեան Արգար, Գալստեան Ստեփան, Շիոյեան Սարգիս ա. քահանայ, Բաշինջաղեան Գէորգ և Տէր-Սարգսեան Սամսոն։ Յանձնաժողովին իրաւունք է տրում կօպտացիայի միջոցով հրաւիրելու աջակցող ոյժեր և՝ եթէ գործի կազմակերպութեան համար հարկաւոր կը դատվի այդ։

Նախադահ Ընդ. ժող. Եր. Ատովմեան

Քարտուղար՝ Ա. Յ.

Ստորագրութիւններ ծխականների—



ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

I.

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բեսարաբիայի թեմի Գրիգորուպով քաղաքում, 1845
թւի հոկտեմբերի 22-ին, Խաչատուր քահ. Սամւելեանի
ամուսին՝ տիրուհի Անթառամ Մովսիսեանը ծնում է իր
երրորդ տղայ զաւակը, որին մկրտում են ու անւանում
Գրիգոր:

Խաչատուր քահանայի ընտանիքին աւելացած մա-
նուկ Գրիգորը՝ առանձին ուրախութիւն է պատճառում
թէ իր ծնողներին և թէ ազգականներին, որովհետեւ դեռ
մանկական հասակից՝ Գրիգորի մէջ նկատում է աշխա-
տասիրութիւն և բնաւորութեան քաղցրութիւն:

Այս վայելուց յատկութիւններով օժտւած մանուկը՝
ժառանգական այն առաքինութիւնների յաջորդողն է
հանդիսանում ամենի աշքում, որոնք եղել են Սամ-
ւելեան ցեղի գեղեցիկ հատկանիշները: Օրինակ՝

Մանուկ Գրիգորի պապը՝ Խաչատուր քահ. Սամւե-
լեանցը, դեռ 1825 թւականներում՝ որպէս պարտաճանաչ,
մաքուր հաւատքի և անկեղծ մարդասիրութեան տէր մի
հոգեոր հովիւ՝ այնքան էր սիրւած ու յարգւած իր հօտի՝
ծխական համայնքի կողմից, որ ամենքը նրան իրենց
հարազատի տեղ էին ընդունում:

Ամբողջ Բեսարաբիայի հայ ժողովուրդը, որ մեծ
մասամբ Անի քաղաքից գաղթած հայութեան ներկայա-
ցուցիչներն ու նոր սերունդներն էին՝ իրենց օտարու-

թեան նոր ընակավայրում՝ մի հարազատ բարեկամ ու մխիթարող միայն ունէին և դա էր՝ յիշեալ Տէր-Խաչատուը:

Այս Տէր-Խաչատուը որդին՝ Խաչատուը քահանան՝ Գրիգորի հայրը՝ իր հօր բարեհամբոյր ընաւորութեամբ համակւած՝ իր գործունէութեան սիրով նոյնպիսի յարգանք ու պատիւ էր վայելում իր հօտից: Ու այսպէս՝ Սամւէլեան ազգի քահանաների պարտաճանաչութեան ու ժողովրդասիրութեան համբաւը տարածւելով Բեսարաբիայում՝ հասնում է մինչև ո. Էջմիածին, ուր այդ ժամանակներում Մայր-Աթոռին նստած Երջանկայիշատակ Եփրեմ Կաթուղիկոսը՝ մխիթարւելով Սամւէլեան ազգի քահանաների մասին իրեն հասած բարի համբաւներից՝ հետևեալ կոնդակով իր Հայրապետական օրինութիւնն է առաքում Բեսարաբիայի Սամւէլեանցներին:

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տ-ը Եփրեմ Կաթուղիկոս ամ. Հայոց և Ծայրագոյն Պատրիարք Առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, և մեծի Մայր Աթոռոյս սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Տէր-Խաչատուը Սամուէլեան քահանայի սուրբ Աստուածածին եկեղեցւոյ հայոց ի Գրիգորիօպոլ Հայրապետական օրէնութիւն: Վասն ամենայն գործոց ձերոց հարազատութեանց ամենայն ժամանակս յաջորդութեանց բարձր պատւոյ արժանաւոր Մանուէլ Վարդապետին մերոյ, լուեալ ի նորին վկայութեանց լիով. այժմուս յայտնեալ էր մեզ բարձր Մըրազան Ներսէս Արք Եպիսկոպոսն վասն կարգելոյն զձեզ գործակատար գործոց Աթոռայնոց և առաջնորդականաց եղելոց յառաջազոյն ընդ կառավարութեամբ անձանց Աթոռակալ անուանելոց յաղագըս այնպիսի հարազատութեանց ձերոց և արի և ջերմեուանդ Ժրաշանութեանց հանդերձ քահանայավայելուչ Երկիւղածութեամբ և բարեպաշտութեամբ. կցորդելով ընդ այնմ և զմիջնորդութիւն իւր յաղագս վարձատրելոյ զարժանաւորութիւն ձեր խաչիւ պարանոցի, ընդ որ և մեք ոչ անտես առնելով զգովանի գործան ձեր և զաշխատութիւնսն ըստ յայտնեցելուն մեզ՝ պարզենք ձեզ զիսաչ ուկի պատկերաւ Փրկչին կրել

շղթայիւք ի պարանոցի, և յուսամբ թէ, նոյնպիսի
փութով մշտնջենաւորելով ձեր ի ձերում հարազատու-
թեան արդիւնաւորել ունիցիք զքահանայութիւն ձեր
օրինակական առաքինասիրութեամբ և արիաջան
սպասակարկութեամբ ամենապատուական արեարն
Քրիստոսի գնեալ ժողովրդեան հայոց, նովաւ հան-
դերձ արդիւնաւորիլ զամենայն զգործոն յանձնեցեալ
ըստ իւրաքանչիւր վայելչութեանց անխարդախ մտօք
և կամօք և ամենայն համեստութեամբ ձերով, և ար-
ժանաւորութեամբ զործոց իւրաքանչիւրոց, և մնամք
ձեղ և ամենայն ժողովրդեան ձեր օրհնաբան միշտ և
աղօթանուէր առ Քահանայապետն երկնաւոր:

ի 1829 գեկտեմբերի 6 Կաթողիկոս Ամ. Հայոց
ի սուրբ Էջմիածին ԵՓՐԵՄ
Հ-մբ 352

Ահա այդ նախորդների ժառանգն է հանդիսանաւմ
մեր Ստեփաննոս ա. ք. Սամւէլեանը, որը մանկական
հասակից առանձին հակումն է ցոյց տալիս դէպի
եկեղեցին ու հոգեոր կոչումը:

Նա եօթ-ութ տարեկան հասակից իր սկզբնական
ուսումն ու կրթութիւնը ստանումէ իր ծննդավայրում՝
Գրիգորուպոլի ծխական դպրոցում։ Որպէս ծխական
դպրոցի սան՝ իր առաջադիմութեամբ վայելումէ թէ իր
ծնողների և թէ, որ գլխաւորներն է, իր ուսուցիչների
սէրը։

Բախտի բերմամբ, երբ մեր Գրիգորն աւարտում ի
իր նախնական ուսումը, հենց այդ ժամանակներում,
1858 թւի հոկտեմբերին՝ Ղրիմի Թէոդոսիա քաղաքում
բացումէ Խուլիփեան ազգային միջնակարգ դպրոցը,
որի կառավարչութիւնը յանձնւած էր՝ այդ թեմի նոր-
ընտիր առաջնորդ Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեանին։

Նորաբաց միջնակարգ դպրոցի համար շրջանի ծխա-
կան դպրոցաւարտներից քահանաների որդոց ընդունում
էին ոչ միայն ձրիավարժ աշակերտ, այլ և գիշերօթիկ։

Բախտը ժպտում է Գրիգորի, և նա էլ գնում-ըն-

դունւումէ Խալիփեան դպրոցում։ Գիշերօթիկ սան Գրիգորը սովորում է դպրոցում նւիրւած եռանդով։ Իր դասերից զատ՝ պարապում է ընթերցանութեամբ ու հետզհետէ զարգանում։ Այստեղ ևս նա սիրւում է թէ իր ընկերներից, թէ դպրոցի ուսուցիչների ու տեսչի կողմից ո թէ։ Որ զլխաւորն է սրբազան առաջնորդի կողմից։

Գրիգորն այժմ, որպէս խելահաս պատանի, ինքնագիտակցութեամբ բեռնաւորւած՝ իր ապագայ գործունէութեան ծրագիրն է փայփայում իր սրտի խորքում։ Երբ՝ 1866 թւին, յունւարի 9-ին որպէս առաջադէմ աշակերտ, աւարտում է Խալիփեան միջնակարգ դպրոցը՝ ստանումէ աւարտման լաւագոյն վկայական № 4։

II

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՆՈՍԸ ԻԱԼԻՓԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՌԻՍՈՒՑԻՉ

Գրիգորը որպէս 20—21 տարեկան նորաւարտ՝ առանձին սիրով ձգտում է հասնել իր ծրագրած նպատակին, այնէ՝ լինել ուսուցիչքահանայ։ Եւ հանգամանքների յաջողութեամբ նա իր աւարտման յաջորդ 1867 թւին, առաջին քայլն է անում դէպի իր ընտրած ասպարէզը։

Ամենից առաջ նա դառնում է կերչ քաղաքի ու Հրեշտակապետաց եկեղեցու պաշտօնեայ դպրի կոչումով։ Այդ եկեղեցու ծխատէրն էր Գրիգորի հայր Տէր-Խաչատուրը։ Սա տեսնելով, որ իր երեք որդիները սովորում են Թէոդոսիայի դպրոցում, ու նրանց առանց ծնողների հոգատարութեան թողնելը իրեն համար ծանր է, խնդրամատոյց է լինում թեմական առաջնորդ Գաբրիէլ եպիսկոպոսին տեղափոխելու իրեն Հրեմի քաղաքներից մէկն ու մէկը։ Առաջնորդը յարգում է Տէր-Խաչատուրի իրնդիրը և նրան տեղափոխումէ Հին-Հրիմ և նշանակում այնտեղի ծխական քահանայ։ Հին-Հրեմը Թէոդոսիայից 25 վերստ տարածութիւն ունէր։

Դպիր Գրիգորը թէև կերչի եկեղեցու շտատնի դպիր էր համարւում, սակայն՝ ի նկատի ունենալովնքա եռանդըն ու շնորքը՝ հոգեոր իշխանութիւնը 1867 թվի ուսումնական տարւայ ոկզբից նշանակում է Թէոդոսիայի Խալիֆեան ազգային դպրոցի կրօնուսոյց։

Այս այսպիսով Գրիգորին յաջողւում է իր ընտրած ասպարէզի Երկրորդ կոչմանն ևս հասնելու։ Գրիգորը դառնալով ուսուցիչ՝ իր նոր պաշտօնում ցոյց է տալիս այնպիսի նւիրական պարտաճանաչութիւն ու բարեխըդառնութիւն, որ դառնումէ աշակերտների սիրւած ուսուցիչը ու վայելումէ աեսչի սիրալիր յարգանքը։ Այդ պաշտօնում նա մնում է մինչև 1871 թիւը, այնէ մինչև նոյն դպրոցի փակման օրը։

III

ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՆՈՍԸ ԳԵՈՐԳԻԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՑԻՉ

Դպիր-ուսուցիչ Գրիգորը ամուսնանալով Կիրչ քաղաքում օրիորդ Հոփիսիմէ Թոսունեանցի հետ՝ 1870 թվ նոյեմբերի 1-ին ձեռնադրւումէ սարկաւագ և ապա քահանայ Գաբրիէլ եպ. Այվազեանի ձեռքով ու նշանակւում է Թէոդոսեայի ս. Հրեշտակապետաց եկեղեցու միաբան։ Ձեռնադրութեան ժամանակ նրա անունը փոխում են ու անւանում են Ստեփաննոս խաչեղբօր ցանկութեամբ։

Նորընծայ Ստեփաննոս քահանան իր քառասունքը պահում է կերչում՝ իր հօր՝ Տէր Խաչատուրի կրթութեան ներքոյ։ Նա իր անդրանիկ ս. պատարագը մատուցանում է Կերչի Հրեշտակապետաց եկեղեցում, ուր նա՝ իր անդրանիկ քարոզն է խօսում ժողովրդին և ընդգծումէ իր այն ուղին, որով ինքն ընթանալու է որպէս ուսուցիչ և քահանայ։ Վերադառնալով Թէոդոսեա-

նշանակում է թեմի կոնսիստորիայի անդամ և քարտուղար իր պաշտօնավայր միջնակարգ դպրոցի:

Երբ վախճանուում է նրա հայր Տէր-Խաչատուրը՝ թեմական առաջնորդը տեղափոխում է Տէր-Ստեփաննոս քահանային Կերչ և 1879 թւի յունիսի 20-ին նշանակում է իր հօր ծխականների վրայ ծխատէր:

Որպէս ուսուցիչ մարդ, Տէր-Ստեփաննոսը յատուկ ջանքեր է թափում, որ Կերչում կարողանայ հիմնել տալ ծխական դպրոց: Ժողովի է հրաւիրում ծխականներին՝ յորդորումէ նրանց դպրոց բանալու: Ժողովուրդը մեծ սիրով ընդառաջ է գալիս տէր հօր ցանկութեանը և բաց է անում այդ դպրոցը: Դպրոցի պահպանման ծախքը հոգում է ժողովուրդը, տնտեսական մասը յանձնում է երէցփոխին՝ պ. Ղազարոս Երէցփոխեանին և Սարդ. Ախչեանին, իսկ դպրոցի կառավարչութիւնն ինչպէս նաև կրօնի և հայոց լեզուի դասերը յանձնում է իրեն՝ Տէր-Ստեփաննոսին:

Սակայն Տէր-Ստեփաննոսը երկար չի մնում այս պաշտօններում, որովհետև 1874 թւի հոկտեմբերի 4-ին Նորին Վեհափառութիւն Գէորգ IV կաթուղիկոսի հրամանով Սամւէլեանց քահանան կանչւում է ո. Էջմիածին: Ստեփաննոս քահանան ներկայանումէ Վեհափառին և իմանում է, որ Վեհը պատիւ է արել և նշանակել է նրան Ճեմարանի գեղագրութեան ուսուցիչ և վեհարանի կոնդակագիր:

Տէր-Ստեփաննոսը որպէս ուսուցիչ ճեմարանի, իր քաղցր բնաւորութեամբ շուտով սիրելի է դառնում Ճեմարանի շրջապատում, իսկ որպէս վեհարանի պաշտօնեայ այնքան է սիրում Կաթուղիկոսի կողմից, որ 1875 թւի մայիսի 3-ին Կաթուղիկոսը հետևեալ կոնդակով պարզեատընդումէ նրան լանջախաչով:—

ԳԵՂԻՐԴ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքըն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծարագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայրեկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. Բարեկրօն Ստեփանոս քահանայի Սամուէլեան ողջոյն և օրհնութիւն:

Լուեալ մեր զհամբաւ համեստագնաց քոց և արժանավայել քաղաքավարութեանդ ի քահանայական սուրբ կոչման, զոր հաւաստեցիր ի պարծանս անձինքուն նաև յԱթոռս սուրբ, յորում ժամանակս ինչ վարեցիր զպաշտօն ուսուցչի գեղագրութեան ի Ճեմարանի, մենք ի Խրախոյս քեզ յառաքելագոյն հոգեոր վաստակս և ի գործունէութեանս թեակոխելոյ և անստերիւր վարուք ի նմին պարկեշտափայլ գնացս ընդմիշտ յարատելոյ, սովին Հայրապետական կոնդակաւ շնորհեմք քեզ իրաւունս արկանելոյ ի պարանոց քո զիսազ արծաթեայ ոսկեզօծ, իրուն նշան յայտարարար Մերոյ գոհունակութեան զգովանի յատկութեանցդ և քեզ յառիթ զանձն օրինակ բարի ընծայեցուցանելոյ բանաւոր հօտին, որում կարգեալ ես լինել հովիւ ճշշմարիտ՝ առաջնորդելով զնա բանիւք և օրինակաւ անձին ի ճանապարհն Փրկչի և երանաւէտ կենաց՝ ողջ լեռ:

թ. 169.

ի 23 մայիսի 1875
և ըստ Տոմարիս ոյիդ
ի Ս. Էջմիածին

ԳԵՂԻՐԴ ե-

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆ. ՀԱՅՈՑ

Էջմիածնում՝ Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեամբ Ստեփանոս քահանան սկսում է սովորորել Զայնագրութիւն հայկական ձայնանիշներով, որն աւանդում է նրան Արմաշու վանքի սան Ճէպէճեան Գրիգոր ուսուցիչը։ Ու Տէր-Ստեփանոսը յաջողութեամբ աւարտում է նաև այդ դասընթացը։

Այդ տարւան գարնանը ճեմարանի քննութիւնները

վերջանում են։ Տէր-Ստեփաննոսը որպէս ուսուցիչ ազատ է համարւում զբաղմունքներից։ Խնդրում է Վեհափառին իրեն արձակել։

Բախտի բերմամբ այս օրերին էջմիածին է ժամանում Գար. արքեպիս. Այվազեանը, որը լսելով Տէր-Ստեփաննոսի վարած պաշտօնների բարի համբաւը՝ ուրախանում է իր սանի առաջադիմութեամբ։ Սամւէլեան քահանան նրա միջնորդութիւնն է խնդրում՝ յաջողեցնելու իր վերադարձը։

Հայր Սամւէլեանը յատուկ բաւականութեամբ վերադառնում է Կերչ և 1875 թւից նորից շարունակում է իր ուսուցչական քահանայական և Կոնսիստորիայում ունեցած իր պաշտօնները։ Ժողովուրդը լսելով իր սիրած քահանայի վերադարձը՝ դալիս է նրա օրհնութիւնն առնելու և ս. էջմիածնի Մայր-Աթոռի մասին իրենց հաճելի տեղեկութիւնները լսելու տէր-հօրից։

Այս անգամ էլ Սամւէլեան քահանան, որպէս ուսուցիչ, ցանկանում է, էջմիածնում ուսած իր Հայկական ձայնագրութիւնը սովորեցնի և ուրիշներին։ Վեհափառի հրամանով Կերչում բաց է անում շրջանի դպիրների համար Զայնագրութիւն դասընթացներ և մէկ ու կէս տարի նրանց աւանդումէ Հայկական Զայնագրութիւն, որով հնարաւորութիւն է տալիս ամեն տեղ ժամերգութիւնը ձայնագրութեաբմ վարելու։ Հայր Սամւէլեանը այս դասընթացքներում ո՛չ միայն ձրի է աւանդում, այլ և աշակերտող դպիրներից շատերի համար հոգում է ապրուստի միջոցներ։


Վեհափառ Կաթուղիկոսի առաջարկութեամբ և Կառավարութեան հաճութեամբ՝ 1876 թւին Վրաստանի Հայոց թեմական առաջնորդ և միենոյն ժամանակ Թէորդեան ճեմարանի տեսուց է կարգւում արքեպիս. Այվազեանը։

Սա իր նոր պաշտօնավայր Թիֆլիսում՝ իրեն համար հաւատարիմ և բարեխիղճ պաշտօնեայ ունենալու ցանկութեամբ խնդրամատոյց է լինում Վեհափառին, որ իրեն թոյլ տրւի իրեն հետ առնելու Սամւելեան քահանային։ Ստացւում է այդ թոյլտւութիւնն ևս, և 1876 թւի մարտի 17-ին, № 536 հրամանի համաձայն Սամւելեան հայրը տեղափոխուում է Թիֆլիսի թեմը։

Հայր Սամւելեանի կերչից մեկնելու համբաւը մեծ ցաւ է պատճառում հայ ժողովրդին։ Ամենքը միաբերան ափսոսում են որ զրկում են նման սրտացաւ քահանայից։ Կամենում են համախօսականով դիմել էջմիածին, որ Սամւելեան քահանային չտեղափոխեն, օրեայց իմանալսվ, որ միջնորդութիւնը Սրբազն Առաջնորդի կողմից է արւել, որի համարումը մեծ է էջմիածնում, ուրեմն և իրենց դիմումը կարող է չը յարգւել՝ իրենց մտադրութիւնը փոխում են։ Ժողով են անում ու որոշում, որ տէրհօրը յատուկ ճաշկերոյթով ողջերթ մաղթեն ու հանդեսաւորութեամբ ճանապարհեն։

Տէրհօր մեկնելու նախընթաց օրը՝ այնէ 1876 թւի մայիսի 5-ին՝ ժողովուրդը հաւաքւած հանդիսավայրում՝ Սամւելեան քահանայի մեկնելու առթիւ հանդէս են կատարում. իրենց դպրոցի ռուսաց լեզւի ուսուցիչ Սաւելովը հանդիսին դրւատումէ Սամւելեան քահանայի գործունէութիւնը, յատուկ շնորհակալութիւն է յայտնում դպրոցի աշակերտութեան և ուսուցչութեան կողմից նրա ընկերակցութեան բարեացկամութեան համար և ընդգրծելով, որ Սամւելեանը զնումէ աւելի բարձր պաշտօններ վարելու՝ ողջերթ և յաջողութւն է ցանկանում նրան։

Ճաշի ժամանակ խօսում են նոյնպէս պ.պ. Ախչեանը, Թոսունեանը և Սելինեանը. մատուցանում են տէրհօրը ձեռքի արծաթապատ աւետարան իբրև յիշատակ և դրամական մի նւէր։ Սամւելեանը ամենքին իր անկեղծ շնորհա-



վերջանում են։ Տէր-Ստեփաննոսը որպէս ուսուցիչ ազատ է համարւում զբաղմունքներից։ Խնդրում է Վեհափառին իրեն արձակել։

Բախտի բերմամբ այս օրերին Էջմիածին է ժամանում Գար. արքեպիս. Այվազեանը, որը լսելով Տէր-Ստեփաննոսի վարած պաշտօնների բարի համբաւը՝ ուրախանում է իր սանի առաջադիմութեամբ։ Սամւէլեան քահանան նրա միջնորդութիւնն է խնդրում՝ յաջողեցնելու իր վերադարձը։

Հայր Սամւէլեանը յատուկ բաւականութեամբ վերադառնում է Կերչ և 1875 թւից նորից շարունակում է իր ուսուցչական քահանայական և Կոնսիստորիայում ունեցած իր պաշտօնները։ Ժողովուրդը լսելով իր սիրած քահանայի վերադարձը՝ դալիս է նրա օրհնութիւնն առնելու և ս. Էջմիածնի Մայր-Աթոռի մասին իրենց հաճելի տեղեկութիւնները լսելու տէր-հօրից։

Այս անգամ էլ Սամւէլեան քահանան, որպէս ուսուցիչ, ցանկանում է, Էջմիածնում ուսած իր Հայկական ձայնագրութիւնը սովորեցնի և ուրիշներին։ Վեհափառի հրամանով Կերչում բաց է անում շրջանի դպիրների համար Զայնագրութիւն դասընթացներ և մէկ ու կէս տարի նրանց աւանդումէ Հայկական Զայնագրութիւն, որով հնարաւորութիւն է տալիս ամեն տեղ ժամերգութիւնը ձայնագրութեաբմ վարելու։ Հայր Սամւէլեանը այս դասընթացքներում ո՛չ միայն ձրի է աւանդում, այլ և աշակերտող դպիրներից շատերի համար հոգում է ապրուստի միջոցներ։

IV

Վեհափառ Կաթուղիկոսի առաջարկութեամբ և Կառավարութեան հաճութեամբ՝ 1876 թւին Վրաստանի Հայոց թեմական առաջնորդ և միևնոյն ժամանակ Թէորդեան ճեմարանի տեսուչ է կարգւում արքեպիս. Այվազեանը։

կալութիւնն է յայտնում և յուսադրում, որ ինքը պէտքէ աշխատէ բոլորի ցանկութեան համաձայն իր նոր պաշտօններում աւելի բարեխիղճ նշիրականութիւն ունենալ:

Յաջորդ օրը՝ բոլորը գալիս են տէրհօր բնակարան, նրա հետ խմբւած գնում են նաւահանգիստ. երկրորդ ու երրորդ զանգի հնչելու միջիոցին ամենքը յուղումնալից աչքերով գալիս համբուրւում են տէրհօր հետ և այդպիսով ճանապարհում են նրան դէպի Թիֆլիս իր ընտանիքի հետ:

Գարբիէլ եղ. Այվազեանը Տէր-Ստեփաննոսին Թիֆլիս համնելուն պէս նշանակում է առաջնորդական դիւանի քարտուղար, առաջնորդարանի տնտես և 1876 թւի հոկտեմբերի 28-ին նաև օպնական է կարգում Կոնսիստորիայի ատենադպրի, որպիսի պաշտօնները հայր Սամւէլեանը վարում է մինչև 1882 թիւը:

V

ՍԱՄԻԷԼԵԱՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՆԻԿՈԼԱԵՒԿԻՑ ԴՊՐՈՑԻ ԵՒ Յ.ՌԴ ԱՐԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻՕՆԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Թիֆլիսում 1880 թւի սեպտեմբերի 13-ին, № 5141 գրութեամբ Սամւէլեան քահանան նշանակւում է կրօնուսոյց և Հայոց լեզւի ուսուցիչ Թիֆլիսի պետական երկդասեան Նիկոլաեսկիյ դպրոցում։ Այդ պաշտօնները նաստանում է Առաջնորդի առաջարկութեամբ և կովկասի Ռւսումնական շրջանի Հոգաբարցու Եանովսկու հրամանով։ (Попечитель Кавказского учебного округа):

Տէր-Ստեփանն այս պաշտօնները վարում է ամենայն եռանդով և մատաղ սերնդին հաճելի վարւեցողութեամբ։ Այս պաշտօնները վարում է նա քսան տարի, մինչև 1900 թւի հոկտեմբերի 1-ը։ Այս ծառայութիւնը ուսուց օրէնքով համարւում էր պաշտօնական ծառայութիւն

(штатная должность) орбի համար էլ Սամւելեանցին նշանակում է տարեկան կենսաթոշակ (пенсія), մինչև նոր պաշտօն ստանալը:

Այնուհետև Սամւելեանը հաստատում է Թիֆլիսի երրորդ արական դիմագիօնի ուսուցիչ և մնում մինչև 1919 թիւը: Այն է մինչև վրաց կառավարութեան որոշմամբ կրօնի առարկայի վերացումը մեր դպրոցներից: Նիկոլաևսկի, դպրոցում 20 տարի պաշտօնավարելուց յետոյ՝ նոյն դպրոցի տեսչի առաջարկութեամբ Սամւելեանը վարձատրում է կայսերական բարձրագոյն հրովարտակով՝ 1900 թւի մայիսի 23-ին ս. Ստանիսլաւի երրորդ աստիճանի շքանշունով:

Սամւելեան քահանայի բարերար-ուսուցիչ Գաբ. արքեպիս. Այվազեանը 1882 թւին յանկարծական մահով վախճանում է. և Սամւելեանը խորին ցաւով մնում է առանց սրտացաւ բարեկամի:

Առաջնորդի մահից յետոյ Սամւելեանն էլ մնում է առանց պաշտօնի և ծխի: Բազմանդամ ընտանիքով ծանրաբեռնուած՝ նա ընկնում է տնտեսական ծանր կացութեան մէջ: Երկար ու ձիգ տարիներ դպրոցական կեանքին նւիրւած ուսուցիչ քահանան՝ մնում է տարեկուսած: Ուսուցչական պաշտօնն իր համեստ ոռնիկով ապրեցրած է լինում միայն նրան իր ընտանիքի հետ:

Անցնում է մի տարի և հազիւ ս. Սենօդի կարգադրութեամբ Թիֆլիսի կոնսիստորիայի № 341 հրամանով 1883 թւի փետրւարի 4-ին, Սամւելեանը նշանակում է Միաբան և ծխատէր քահանայ Թիֆլիսի Կաթողիկէ ս. Ա. ծածին (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցու որտեղ և նա մինչև օրս վարումէ, իր քահանայութիւնն ու եկեղեցու աւագ երէցի պաշտօնը:

Սամւելեանը՝ Յովնանեան, Գայիանեան եւ Ներսիսեան
դպրոցների Ռւսոցիշ

Կերչից Թիֆլիս տեղափոխւելով Սամւելեան քահանան
1876 թւին՝ և նշանակւելով առաջնորդարանի ու Կոն-
սիստորիայում զանազան պաշտօններում, նա առանց
ուսուցչական պաշտօն ունենալու չի կարողանում բաւա-
կանութիւն ստանալ Թիֆլիսի իր գործունէութիւնից։
Ուսուցչութիւնը նրա սիրած ու առանձին բաւականու-
թիւն պատճառող զբաղմունքն էր։ Եւ հենց այդիսկ զգացմունքով՝ նա 1877 թւի նոյեմբերից հրաւիրւում է²
Յովնանեան օրիորդաց դպրոց գեղագրութեան ուսուցիչ։
որպիսի պաշտօն վարեց նա մօտ տասը տարի։ Այդ միե-
նոյն ժամանակամիջոցին նա երեք տարի էլ եղաւ Գա-
յանեան օրիորդաց դպրոցի կրօնի ուսուցիչ։

Յովնանեան և Գայանիան դպրոցները տէրհօր քաղ-
ցըաբարոյ ընաւորութեանն այնքան էին դիւր դալի, որ
այդ դպրոցներից ամեն անդամ առանձին բաւականու-
թեամբ էր դուրս դալիս ու գնում իրենց տուն։ Այդ
դպրոցների խելահաս աղջիկները, այն ժամանակների մեր
մատաղ սերնդի գովական ներկայացուցիչները, յատուկ
առաջադիմութեամբ և ոգևորում էին իրենց դասառու-
ներին և մխիթարում իրենց ծնողներին։ Սամւելեան
քահանան էլ մէկն էր այդ միջնավայրի ուսուցիչներից,
որից գոհ էր և՛ ինքը և իր աշակերտութիւնը։

Սամւելեանի ուսուցչութեան բարի համբաւն ու ման-
կավարժական կարողութիւնը հասնում է նաև Ներսիսեան
դպրոցի Հոգաբարձութեանը, որը 1883 թւին սեպտեմբե-
րի 1-ին հրաւիրում է գեղագրութեան ուսուցիչ իր դըպ-
րոցի համար։ Չորս տարի, այնէ մինչև 1887 թւի օգոս-
տոսի 1-ը Սամւելեանը այդ պաշտօնը վարումէ Ներսի-

սեան դպրոցում ուր և յատուկ բաւականութիւն պատճառում դպրոցի սաներին ու վարչութեանը:

Նոյն դպրոցի Հոգաբարձութիւնը տեսնելով Սամւելեան քահանայի հաւատարմութիւնն ու նւիրաբերութիւնը՝ նրան յանձնեց Դաշտի-խաչի ուխտատեղու արդիւնքները տնտեսելու գործը: Սամւելեանն իր այդ վերահսկիչի պաշտօնը վարեց տասը տաշի առանց վարձատրութեան յօգուտ դպրոցի տնտեսականի բարելաւման: Տասը տարուց յետոյ հրաժարւեց ինքը, որի համար Հոգաբարձութիւնը յայտնելով իր շնորհակալութիւնը, մատուցեց տէրհօրը հետեւեալ գրութիւնը.—

Հոգաբարձութիւն Ներսիսեան Հայոց Հոգեորդպրոցի

Բարեկրօն Ստեփաննոս քահանայի Սամուելեանց:

Հոգաբարձութիւնս ի նստի իւրում յ9-ն ամսոյս լուան զյայտաբարութիւն Զեր ի՛ նոյն թիւ № 74, որ յաղագս տալոյ Զեզ զվկայաթուղթ վասն տասնամեայ ծառայութեան Զեր ի պաշտօնի վերատեսչի արդեանց ուխտատեղոյն Դաշտի-խաչի. կարգաւորեցին ազատ կացուցանել Զեզ ի պաշտօնէ վերատեսչութեան արդեանց մասանց ուխտի Կաթուղիկէ եկեղեցւոյ քաղաքիս և վասն տասնամեայ ձրիաբար ծառայութեան Զեր յօգուտ Դպրոցիս յայտնել զշնորհակալիս:

Հերթակալ Հոգաբարձու ՅԱԿ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

Գործավար Ռ. ՄԵԼԻՔԱՆԱՄԵԱՆ

№ 1146.

ի 11-ն նոյեմբերի 1894 ամի
Տփխիս

Գէորգ Դ. Կաթուղիկոսին յաջորդող Մակար Կաթուղիկոսը՝ իմանալով հայր Ստեփաննոսի ուսուցչական ու քահանայական պարտաճանաչութեան բարի համբաւները

թէ հայկական դպրոցներում և թէ առհասարակ պետական դպրոցներում՝ 1888 թւի դեկտեմբերի 19 ին՝ իր օրհնութեան հետևեալ կոնդակով իրաւունք է տալիս նրան ծածկելու համիլաւկայ կոչւած քահանայական գլխարկը.—

ՄԱԿԱՐ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքըն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի.

Հարազատ որդւոյ առաքելական մայր Եկեղեցւոյ Կաթուղիկէ էջմիածնի բարեկրօն Ստեփաննոս քահանայի Սամուէլեան:

Հասու եղեալ Քոյոց համեստ գնացից արիաջան քահանայագործութեանդ մանաւանդ արդիւնաւոր դաստիրակութեանդ ի կրթութիւն զաւակաց ժողովրդեան Կաթուղիկէ սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ, շնորհեմք Քեզ զիրաւունս կրելոյ ի գլուխ քո զկամիլաւկայ անուանեալ գլխարկն պատուոյ, մաղթելով յԱստուծոյ հանգուցանել ի Քեզ զշնորհս Երկնաւոր բարեաց առ ի սիրելի հանդիսանալ միշտ առաջի ժողովրդեան Քում հոգուութեան յանձն եղելոյ:

Ողջ լեռ ի շնորհս Հոգւոյն սրբոյ:

**ՄԱԿԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Համար 406.

Ի 19 հոկտեմբերի 1888 ամի Փրկչական
և ի մերում թուականութեան ՌՅԼԸ
ի ք. Ֆիխիս:

Այս բոլորից յետոյ Սամուէլեան քահանայի համար բացւում է գործունէութեան մի այլ ասպարէզ, որը և կազմաւմէ նրա գործունէութեան Երկրորդ շրջանը:
Անցնենք այդ շրջանին:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

I

Սամւելեանք Կովկասի զինորական քահանայ

Ասած խօսք է՝ «Քէֆ անողին քէֆ չի պակսի, գործ անողին՝ գործ»։ Սամւելեան քահանան որպէս գործառէր աշխատաւոր, իր այրական կարող-շրջանում՝ իր ոյժերը միշտ գործադրել է բազմազան զբաղմունքների վրայ ուր եւ դրել է ամբողջ եռանդն ու կորովը։ Որպէս ուսուցիչ-քահանայ իր պաշտօնավարութեան յիսուն տարում նա եղել է կանգնած իր կոչումների բարձրութեան վրայ. ու հենց այդօրինակ գործասիրութեան հետեւանքով է, որ նրան յաջողել է հրաւիրւել միշտ նորանոր պաշտօնների։

Ահա 1894 թւին մենք տեսնում ենք Սամւելեան քահանային Կովկասեան զինորական քահանայի կոչման մէջ։ Նա այդ պաշտօնին է հասնում Հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ, որ և հաստատումէ էջմիածնի ո. Սենողից։

Սամւելեանն իր այդ նոր պաշտօնը կատարում էր Թիֆլիսի գլխաւոր զինորական շտաբում. նա համարւում էր՝ Նոր-Բայազէդեան և Արդահաննեան դնդերի, այլև Կովկասի բոլոր զօրամասերի հովիւ։ Նրա պարտքն էր տարեկան երկու անգամ այցելել Թիֆլիսի, Գորու, Օզուրգէթի, Երեւանի, Դիլիջանի, Լազոգեղի եւ Զաքաթալայի պօլկերում գտնւող հայ զինորներին՝ նրանց կենդանի խօսքով խրախօսելու դէպի անձնւիրութիւնն ու հաւատարմութիւնը։ Երդւեցնում էր նրանց, խսսառվանում ու հաղորդում։

Յիշեալ տեղերի հայ զինւորներին այցելած ժամանակ՝ նա յաճախ տեսնուում էր հայ ու օտար օվիցերների ու գնդապետների հետ, որոնք տէրհօր հետ վերաբերուում էին շատ մտերմօրէն։ Գովումէին նրա առաջ հայ զինւորի քաջութիւնն ու հաւատարմութիւնը, բայց եւ միեւնոյն ժամանակ նկատում էին հայ զինւորի անմաքրասիրութիւնն ու կոպտութիւնը։ Խնդրում էին տէրհօրը, որ նա այդ խնդիրների վերաբերեալ խօսի, խրատի հայ զինւորներին, որոնց թիւը հասնում էր 9—10 հազարի։

Սամւէլեան քահանան անուշադիր չէր թողնում զինւորական մեծերի այդ նկատողութիւնը՝ եւ երբ այցելում էր այս կամ այն շեջանի հայ զինւորութեանը՝ նրանց հետ խօսում էր առողջապահութեան մասին, ոգեւորում էր նրանց այն հասկացողութեամբ, որ եթէ այսօր նրանք ծառայում են Ռուսաստանի ընդհանուր հայրենիքի համար, իրենց սեփական հայրենիքն էլ մտնում է դրա մէջ։ Նշանակում է ծառայում են եւ իրենց հայրենիքի համար։

Նա աշխատում էր հասկացնել նրանց, որ նրանք սովորելով ու վարժւելով զինւորական չարքաշ կեանքին այդ չարքաշութեանը վարժված՝ առանձին դժւարութիւննեղութիւն չեն զգայ՝ երբ մի օր էլ սեփական հայրենիքի՝ Հայաստանի զինւորական ծառայութեան պարտքը կը կանգի իրենց առաջ իրրեւ իրականութիւն։

Այսպիսի խնդիրներով ոգեւորելու գաղափարը՝ տէրհօրը մոռացնել էին տալիս այն նեղութիւնները, որը կրում էր նա ճանապարհորդութիւնների ժամանակ։



Սամւէլեանը Վեհափառ Հայրիկի մօտ

Սամւէլեան քահանան երբ այցելում էր Երևանի Նոր-Բայազեղեան գնդի Հայ զինւորներին, սրբազան պարտք էր համարում գնալ ո. Էջմիածին և Ներկայանալ այն ժամանակ Մայր-Աթոռին նստող Հայոց Հայրիկին։

Հայոց Հայրիկը առաջին անգամ երբ ընդունեց տէր հօրն իր մօտ զրոյցի, նա ամենայն հետաքրքրութեամբ լսեց հայ զինւորների թւի ու քանակի, նրանց քաջագործութիւնների ու գովասանքների այն ամեն տեղեկութիւնները, որոնց մասին ամենայն մանրամասնութեամբ պատմում էր Վեհին Տէր-Ստեփաննոս քահանան։

Իսկ երբ մի անգամ էլ Տէր Ստեփաննոսը Վեհի հարցմունքին պատասխանում է պատմելով զինւորական քահանայի պարտականութիւնների մասին ու ընդգծում, որ իր վրայ պարտք է դրւած նաև քաջալերելու նրանց հաւատարմութեան ոգով, Վեհափառ Հայրիկն առանձին զգացմունքով լեցուն ասում է. —

— «Հա, հասկացուը անոնց, որ նրանք ամենն մի օր Հայաստանի զինեալ ոյժն են ըլլալու, թող որ հայրենեաց սիրով լեցուն՝ այժմ տոկան ապագային քաղցրութեան համար։ Ես կզգամ, որ մօտ ապագայում Հայաստանի բախտն է բացւելու ու հայոց բազմատանջ երկիրը իր զինւորական պէտքն է ունենալու, տէր հայր, իմ կողմից օրհնիր անոնց և եղիր հարազատ հայր բոլորին համար։»

Սամւէլեան քահանան Հայոց Հայրիկի հայրենասիրական ոգուց սիրտ առնելով՝ չէր դադարում ամեն անգամ հայ զինւորների ականջին հնչեցնելու եղբայրսիրութեան ու մարդասիրութեան ձայնը՝ չէր ուզում իր այցելութիւնն անց կացնել չորուցամաք պաշտօնի պարտականութեամբ, նա յաճախ իր զրոյցները համեմում էր Հայոց Հայրիկի յուսով ու հաւատով։

Սամւէլեան Տէր-Ստեփաննոսը աւագ քահանայ

Զինւորական քահանայի պաշտօնը Սամւէլեանը վարում է իննու կէս տարի, մինչև այն օրը, երբ Ռուսաստանի զինւորական նախարարութիւնը հաւանաբար այլն այլ զգուշութիւնների նպատակով՝ ծախքերի կրծատման պատրւակով կարգադրում է վերացնել զինւորական քահանայի պաշտօնը, որով և վերջ է դրում Հայ զինւորներին իր մայրենի լեզով խրախուսող քահանայի այցելութիւններին:

Խըմեան Հայոց Հայրիկը՝ Սամւէլեան քահանային չի թողնում անուշադիր: Նա ամեն անգամ յատուկ սիրով ընդունելով Սամւէլեանին իր մօտ, և առանձին բաւականութեամբ լսելով նրա տւած տեղեկութիւնները՝ ինշան այդ բանի, 1897 թվի յուլիսի 26-ին օրհնութեան կոնդակով իրաւունք է տալիս նրան աւագ-քահանայութեան տիտղոսը կրելու:

Ահա թէ ինչ է գրում Հայոց Հայրիկն իր կոնդակում:

ՄԿՐՏԻՉ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհասանելի Կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համագոգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի. Բարեկրօն Տ. Ստեփաննոս քահանայի Սամուէլեան, միաբանի ս. Գէորգ կաթուղիկէ Եկեղեցւոյ Տփղեաց Հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն:

Քաղցը է մեզ լսել զրարի բարի համբաւոց արժանաւոր պաշտօնէից ս. Եկեղեցւոյ Հայաստանեաց, որք գիտեն ըստ պարտուց պաշտման անթերի կատարել զեղեալն ի վերայ ինքեանց զպարտիս, որով և գրաւեն յինքեանս զուշադրութիւն իշխանութեան հան-

դերձ տըտայտութեամբ համակրանաց: Լուեալ և
զքէն թէ անձնուէր ևս կոչմանդ և անթերի ի կա-
տարումն պարտուցդ, որպէս վկայեցին արք արժանա-
հաւատք, մեք ի խրախոյս մեղ առ ի առաւել ևս յա-
րատեելոյ յայդմ օրինակելի ընթացող, սովին Հայրա-
պետական կոնդակաւ շնորհեմք քեզ զպատիւ աւագ-
քահանայութեան, զի այսու ևս Բարձրասցի պատիւ
քո ի ծառայական շրջանսդ յորում կարգեալ կաս-
քահանայութեան ասեմ Հայ զինւորաց, որոց պարտ է
հրահանգել լինել վարուք օրինակելի, հնազանդու-
թեամբ և հաւատարմութեամբ սիրելի. ուսուցչութեան
ի գիմնազիոնի որ նոյնպէս պարտիք քո են ուսուցա-
նել զաշակերտեալսն լինել ջերմեռանդք առ եկեղեցի
Հայաստանեայց, սիրողք հայրենի աւանդութեանց
և կարգաց և արք պիտանիք յաշխարային ընթացս,
նոյնպէս և Հովուական պաշտմանդ, որ պարտաւորէ
զքեզ արթուն կալ հանապազ և զճիշտ լինել բարոյա-
կան ընթացից և Աստուածահանոյ վարուց քեզ հաւ-
ատացեալ հօտիդ:

Հայցելով ի վերայ քո զաստուածային անսպառ
րարիս, մաղթեմք կալ մնալ քեզ անփորձ և անսայ-
թակ յայդմ նուիրական պաշտամանդ:

Ողջ լեռ զօրացեալ ի Տէր-Ամէն:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹ. ԱՄ. ՀԱՅԱՑ

թ. 749

ի 26 յուլիսի 1897 ամի.

և ըստ տօմարիս ՌՅԱԶ.

ի Հայրապետութ. Մերում դ. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Վեհափառ Հայրիկը Սամւէլեան քահանային սրա-
աւագութեան չորրորդ տարում՝ արժանի է համարում
տալու նաև վարդապետական ականակուռ խաչ կըելու
իրաւունք, որպէսզի դրանով տէրհօրն աւելի խրախուսած
լինի իր գործունէութեան մէջ:

**ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասա-
նելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց Ծարադոյն Պատրիարք համազ-**

դական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ էջմիածնի. Արժանապատիւ Տ. Ստեփաննոս Աւագ Քահանայի Սամուէլեանց, միաբան Ա. Գէորգ Եկեղեցւոյ Կաթուղիկէի Տփխնաց Հարազատի Մայր Աթոռոյ Նուիրեմք ողջոյն և օրհնութիւն:

Քաղցը է Մեզ լսել զբարի բարի համբաւաց պաշտօնէից Մերս և. Եկեղեցւոյ և յաւէտ ախորժելի ընդ օրինակելի Ծառայութիւնս Նոցին, որք բանիւ, գործով և քարոզութեամբ օդտակարք հանդիսացեալք են ինքեանց հաւատացեալ հօտիւ Մենք որ, գիտեմք գնահատել զվաստակաւորս յայնպիսեաց պաշտօնէից, յայս նուագ լուեալ զբարիսք վկայութիւն զքէն ի նորին պայծառափայլութիւնէ յիշխան Նիկողայոսէ Բ. Բէհըութեան, սովին Հայրապետական Կոնդակաւ շնորհեմք Քեզ զիրաւունս կրելոյ զլանջախաչ ականակուռի տրիտուր վաստակոցդ և իխրախոյս առ յապայն գործունէութեանդ, վստահ լեալ միանգամայն եթէ արդարն այդու անբասիր վարուք և ազգօգուտ ծառայութեամբ ունիս յարտեսել յամենայն ընթացսդ:

Ողջ լեր և օրհնեալ յԱստուծոյ ամենակալէ և ի Մենք ամէն:

ՄԿ. ԿԱԹ. ԱՄ. ՀԱՅՈՑ

թ. 1383.

ի 23 հոկտեմբերի 1901 տմի
Նըստ տոմարիս ՌՅԾԱ.

ի Հայրապետութ. Մերում թ. ամի
ի ք. Տփխիս

IV

Ստեփաննոս քահանան ըննիշ կրօնի ծրագիրների

Ասացինք, որ Ստեփաննոս քահանան Թիֆլիսի արական 3-րդ Գիմնազիոնի Կրօնուսոյց դարձաւ 1887 թւին: Նա այդ գիմնազիոնին այնքան նւիրւեց և այնքան շատացաւ նրա զբաղմունքի ժամերը, որ նա ստիպծւած եղաւ թողնելու միւս տարրական դպրոցների դասերը: Սամւէլեանի նպատակն էր գիմնազիոնի հայ աշ-

կերտաթիւնը իրենց ազգային կրօնի հետ այնքան ծանօթացնել, որ նրանց ռուս աշակերտներին աւանդւող դասընթացըն հասցնել, այլև ցանկանում էր իր սաներին այնքան գիտութիւն տալ, որ նրանք կրօնի հետ միասին ծանօթ լինել նաև Հայոց եկեղեցական պատմութեան հետ, որին յարակից շաղկապում էր նաև Հայոց պատմութեան գլխաւոր դէպքերը:

Այս գիմնազիոնում Սամւելեանը վերջը հաստատւեց շտատնիյ ուսուցչի կոչման մէջ. դրանով նրա իրաւունքներն ու ռոճիկը հաւասարւեց ռուսաց կրօնուսոյցի ռոճին:

Տարեվերջին քննութիւններին հայ աշակերտների ցոյց տւած առաջադիմութիւնը պարզապէս երեան էին հանում իրենց դասատւի աշխատանքների արդիւնքը: Այս բանը յաճախ տեսնում էր և գիմնազիոնի տեսուչը և ուսումնական շրջանի հոգաբարձուն և միշտ էլ գոհ էին մնում նրանից: Մանաւանդ մի անգամ, երբ ութերորդ դասարանի աշակերտների քննութիւնն էր՝ Եգիբաշեան ազգով մի աշակերտ այնքան լաւ պատասխանեց իրեն ընկած առմսակի բովանդակութիւնը, որ Հոգաբարձու Ռուդոլֆը հետաքրքրւեց ցանկացաւ ռուսերէն մի քանի խօսքով իրեն ասել պատմւածքը: Եգիբաշեանը նոյնը ռուսերէն լեզով թարգմանելով՝ այնքան լաւ տպաւորութիւն թողեց ամենքի վրայ, որ բոլորն էլ գոհացան:

Սրա հետևանքն եղաւ այն, որ Ռուդոլֆը Սամւելան քահանային յանձնեց պետական դպրոցների համար միւս կրօնուսոյցների առաջարկած ծրագիրների քննութիւնը: Սամւելեանն կազմեց մի յանձնաժողով՝ քննութեան ենթարկեց այդ ծրագիրները ու ժողովի արդիւնքներն առանձին զեկուցումով՝ ներկայացրեց Հոգաբարձութեան:

Վերջին տարիներում հայր Սամւելեանի ծառայու-

թեան 33 տարին էր լրանում։ Նա իրաւունք ունէր ըստ օրէնքի լիակատար կենսաթոշակ ստանալու պետական գանձարանից և իր ծերութեան օրերին հանգիստ ապրելու։ Հենց այդ մտքով նա մտաղիր էր հրաժարւելու պաշտօնից։

Սակայն համաշխարհային կործանիչ պատերազմը ամեն ինչ խորտակեց, ամեն ինչ կերպարանափոխեց և Սամւելեան քահանայի կենսաթոշակ ստանալը ո՛չ միայն չը յաջողեց, այլև՝ Վրաստանում հիմնելով դեմոկրատիկ հանրապետութիւն՝ 1918 թւի նոյեմբերի 26 ին Վրաստանի կառավարութեան սոր օրէնքով կրօնի առատկան հանւեց դպրոցների ծբագրից և ինչպէս բոլոր կրօնուսոյցները՝ այնպէս էլ Ստեփաննոս քահանան ազատ համարւեցին իրենց պաշտօնից։ Նա մնաց իր վոքրաթիւ ծխի ու իր եկեղեցու չնչին արդիւնքների յուսով։

Ահա այսպէս է վերջանում յիսուն տարի իր ուսուցչական կոչմանը նւիրւած եօթանասուն և հինգ ամեայ ուսուցիչ-քահանայի գործունէութիւնը։ Այն ուսուցչի, որ իր պարտաճանաչութեան խորին զգացմունքով ոգեսորւած՝ որ դպրոցում ոտքէ դրել նա՝ այնտեղ դրել է իր եռանդուն կորով որի համար նա ստացել է բազմաթիւ շնորհակալական ու գովարանական գրութիւններ միայն։ Այդ գրութիւններից իրեն նմուշ՝ այստեղ առաջ ենք բերում Թիֆլիսի առևտրական դպրոցի վերատեսչի № 664 հետևեալ գրութիւնը։

Его Преподобию

Протоіерею Степану Христафоровичу Самуэлянцу

Освободивъ Васъ согласно Вашему прошенію отъ уроковъ Закона Божія, выражая Вамъ глубочайшую признательность отъ себя и отъ имени вве-

ренныхъ моему попеченію воспитанниковъ за Вашу плодотворную педагогическую дѣятельность въ теченіе восьми лѣтъ въ Тифлисскомъ Коммерческомъ училищѣ.

Директоръ Г. Гертманъ

3-го сентября 1908 г.

г. Тифлисъ

№ 664

V

Սամէլեանն որպէս ծնող հայր

Սամէլեանն որպէս ծնող հայր, որպէս զաւակների տէր, որպէս գիտակցող ուսուցիչ՝ իր առաջին պարտքն է համարել իր զաւակներին կրթութեան տալու, ոյն ևս միջոցները ներածին չափ՝ բարձրագոյն կրթութեան։ Այդպիսով նա՝ հակառակ Թիֆլիսի այլև այլ քահանաների սովորութեան, որոնք իրենց որդոց կրթութեան մասին այնքան անտարբեր էին գտնում, որ նրանք մեծանում էին անուսում,— Սամէլեանը իրեն երեք որդիներին հասցնում է նոյնիսկ բարձր կրթութեան։

Նրա Խաչատուր որդին աւարտում է Պետրոգրադի համալսարանն ու Գերմանիայի Ենա քաղաքի համալսարանի իրաւաբանական մասը։

Մինասը միջնակարգ դպրոցից յետոյ աւարտում է Պետրոգրադի հաշւապահական բարձր կուրսերը։ Իսկ Մեհրանը՝ Մոսկվայի Կոնսերվատորիան։

Զենք ուզում մոռանալ այստեղ մի հանգամանք ևս այդ այնէ, որ Սամէլեան քահանայի տիրունին՝ տիկին Հոփիփսիմէն իր ամուսնու ամեն մի քայլափոխումին՝ չանդիսանում է նրա սրտակից օգնականը և որպէս ծնող մայր հետեւում է իր որդոց կրթութեան ու դաստիարակութեան գործին։

Այսպիսով նա դառնում «Կիս ժրագլուխ» պսակ է առն իւրում» խօսքի խսկական իմաստի և ոգու արտա-լայտիչը, իսկ այս ծնողների զաւակները հայ հասարակութեան պիտանի անդամներ:

ՎԵՐԶԻՆ ԽՕՍՔ

Բնաւորութեամբ բարի, խօսքով քաղցրախօս, հաւատով ու համոզմունքով քրիստոնեայ, գործով ու աշխատասիրութեամբ նւիրական Ստեփաննոս հայրը՝ իր ուսուցչական ու քահանայական յիսուն տարւան գործունէութեամբ՝ իր յետեկից թողնումէ այն բարի համբաւն և անկեղծ համակրանքն իր աշակերտների, ծանօթների, և որ գլխաւորն է՝ իր ծխի, ծխական համայնքի բոլոր շրջաններում, որով երախտապարտութեան ոգով լեցուն՝ այսօր այդ ամենքը պէտքէ աշխատեն ամենայն եռանդով ընդառաջ գալ ու առլ՝ «Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց»:

Կեանքի օրէնքն է դա: Կուլտուրական գիտակցութեամբ զինւած հասարակութեան սեպուհ պարտականութիւնն է դա: Այդ խորին պարտականութիւնը թելազրում է վարձատրելու ամենքին. — «Որում զհարկս-զհարկս, որում՝ զպատիւս-զպատիւս»:

Սամէլեան ուսուցիչ-քահանան է այն աշխատաւորը, որի վերաբերութեամբ մանաւանդ իր կրթած հարիւրհազար աշակերտութիւնը, այժմեան հարկի պահանջման ժամին և հարկաւոր վարձատրութիւնն էանելու և իր յարգանքների պատիւն է մատուցանելու իր սիրելի ուսուցչին:

Հասել է գնահատման ժամը՝ „մշակն արժանի է վարձու իւրում”:

Յ. Ա.



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0013998

A II
12120

~~304.~~